ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«22» 04 2026թ. N 20/33Բ

«ՀԱՍՄԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՂԱՎԱՐԴԻ» Ա/Ձ տնօրեն՝
Հ. Դալլաքյանին,
ՀՎՀՀ 20031332
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, Չարենցի փ.21շ.40
էլ. հասցե՝ mg.gevorg@gmail.com

Հարգելի՛ տիկին Դալլաքյան,

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՀԱՍՄԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՂԱՎԱՐԴԻ» Ա/Ձ (այսուհետ՝ Կատարող) (ՀՎՀՀ 20031332, գործունեության հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, Չարենցի փ.21շ.40) միջև 13.01.2026 թվականին կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԾՁԲ-26/1-ԼՎԱՑՔ-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Կատարողը ստանձնել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին և Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Ծառայության մատուցման ժամանակացույցի պահանջներին համապատասխան մատուցել 3.360.000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի տեքստիլի մաքրման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Կատարողը 23.01.2026թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ չի կարող կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը, իսկ Օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 և 7.11 կետերը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «ՀԱՍՄԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՂԱՎԱՐԴԻ» Ա/Ձ միջև 13.01.2026 թվականին կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԾՁԲ-26/1-ԼՎԱՑՔ-2» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, **որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, **և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:**

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կայացվող վերոհիշյալ որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Դուք վճարեք պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի կայացնի և չի ներկայացնի լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «ՀԱՍՄԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՂԱՎԱՐԴԻ» Ա/Ձ (ՀՎՀՀ 20031332, գործունեության հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, Չարենցի փ.21շ.40) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ անհատ ձեռնարկատիրոջը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան